

23

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԲԵԿԻ
ՄԵԼԻԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՋՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1978





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ФУНДАМЕНТАЛЬНАЯ БИБЛИОТЕКА
МАТЕРИАЛЫ К БИОБИБЛИОГРАФИИ УЧЕНЫХ
АРМЯНСКОЙ ССР

№ 23

КАРАПЕТ АГАБЕКОВИЧ
МЕЛИК-ОГАНДЖАНЫН

Вступительная статья

А. Т. ГАНАЛАНЯНА

Библиография составлена

Р. А. БАБАДЖАНЫН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1978

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱՏՆԵԱԳԻՏՈՒԹՅԱՆ

№ 23

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԲԵԿԻ
Մ Ե Լ Ի Ք-Օ Հ Ա Ն Զ Ա Ն Յ Ա Ն

Ն Է Ր Խ Ժ Կ Ե Ն Ը

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻ


Մատենադիտությունը կազմել է

Ռ. Ա. ԲԱՐԱՋԱՆՅԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1978

Պատասխանատու խմբագիր Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ
Ответственный редактор А. Т. ГАНАЛАНЯН





ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Կենսամատենագիտությունն իր մեջ ամփոփում է գիտականի կյանքի և գիտական գործունեության համառոտ ակնարկ, տպագիր աշխատությունների մատենագիտություն, և գրականություն նրա մասին: Տրված է նաև աշխատությունների այբբենական ցանկ:

Կենսամատենագիտության կազմման աշխատանքներին մասնակցել են Ս. Ս. Զատիկյանը և Լ. Կ. Մելիք-Օհանջանյանը:

ԱԿԱԳԵՄԻԿՈՍ ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱՐԵԿԻ ՄԵԼԻՔ-ՕԶԱՆՋԱՆՑԱՆԻ
ԿՑԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

1893 թ. փետրվարի 20-ին (հին տոմարով) Մեղրու շրջանի Կալեբ
գյուղում ծնվել է Կարապետ Աղարեկի Մելիք-Օհանջանյանը: Մեռ. 1970 թ.
փետրվարի 22-ին Երևանում:

1903 թ. Ընդունվել է 1911 թ. ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի
դասարանական բաժինը:

1912—1914 թթ. Սովորել է նույն ճեմարանի արեւելագիտական մասնագիտ
տական դասարաններում:

1914 թ. Ճեմարանի պրոֆեսորական խորհրդի կողմից գործուղվել է Գեր
մանիա՝ սանսկրիտ ուսումնասիրելու և գերմաներենի մեջ հմտա
նալու նպատակով:

1915 թ. Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության արեւելագի
տական բաժանմունքի «Աշխատություններում» տպագրվել
ներա առաջին աշխատության՝ «Մամիկոնյանների նախարարական
տոհմը ըստ Փալստոս Բուզանդի Հայոց պատմության» ընդարձա
ամփոփումը:

1915—1917 թթ. Աղատ ունկնդիր Բեռլինի համալսարանի արեւելագիտո
թյան և փիլիսոփայության ֆակուլտետներում:

1920 թ. Հայկական Կարմիր բանակի քաղաքավարչության կուլտ-կրթա
կան բաժնի պետ և «Կարմիր բանակ» թերթի խմբագիր:

1921 թ. էշմիածնի գիտական ինստիտուտի նախագահ:

1922—1925 թթ. Երևանի պետական համալսարանի դասախոս:

1930—1931 թթ. Հայաստանի Գիտությունների ինստիտուտի գիտնական
քարտուղար:

1931—1937 թթ. Աշխատել է Հայաստանի նյութական կուլտուրայի պառ
չության, Պատմության և գրականության, լեզվի և գրականության

խնտիտուտներում: Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր:

1935 թ. Շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1946—1948 թթ. Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից: Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտի պրոֆեսոր:

1962 թ. Շնորհվել է Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

1963 թ. պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով:

1965 թ. Ընտրվել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Կարապետ Մելիք-Օհանջանյանը դասական հայագիտության և արևելագիտության բաղմակողմանի, տաղանդավոր ու անվանի երախտավորներից է, նրանց լավագույն ավանդույթների կիրառողն ու շարունակողը մեր օրերում, ժամանակակից միջին ու կրտսեր սերնդի հայադեմոստների և արևելագետների նշանակալից մասի ուսուցիչը, խորհրդատուն և հոգատար հովանավորը: Շուրջ կես դար նա անխոնջ եռանդով, բանիվ ու գրչով ծառայել է հայրենի մշակույթին ու գիտությանը, վերջիններիս ի սպաս դրել իր ստեղծագործական մեծ կարողություններն ու հարուստ գիտելիքները:

Կարապետ Մելիք-Օհանջանյանը ծնվել է 1893-ի փետրվարի 20-ին (ն. տ. մարտի 4-ին), Հայաստանի Մեղրու շրջանի Կալեր գյուղում, Աղաբեկ Մելիք-Օհանջանյանի բաղմանդամ ընտանիքում: Նախնական կրթությունը նա ստացել է իր հորեղբոր՝ Փարսադան Մելիք-Օհանջանյանի հարկի տակ՝ Գանձակ քաղաքում, ուր նախ հաճախել է տեղի մասնավոր դպրոցներից մեկը, ապա՝ քաղաքային Տղայոց գիմնազիան: 1903 թ., հորեղբոր գործադրած եռանդուն ջանքերի շնորհիվ պատանի Կարապետն ընդունվում է Ռու-

սաստանի այն ժամանակվա նշանավոր կրթական օջախներից մեկը՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանը: 1911-ին ավարտելով ճեմարանի դասարանները Մելիք-Օհանջանյանը ընդունվում է նույն ճեմարանի մասնագիտական լսարանների արևելագիտական բաժինը: Այստեղ նրան հայոց լեզու և դրականություն է ավանդում Կարապետ Կուսիկյանը, որի ներշնչմամբ էլ Մելիք-Օհանջանյանը որոշում է նվիրվել հայագիտական առարկաների ուսումնասիրությանը:

Ճեմարանի մասնագիտական լսարաններում Մելիք-Օհանջանյանին դասախոսել են՝ անվանի հայագետ Կարապետ Կոստանյանը, նշանավոր արևելագետներ՝ Կրիմսկին, Կորշը, Ալեքսեյ Վեսելովսկին, Գորդևսկին և ուրիշներ:

1914 թվականին Լազարյան ճեմարանի պրոֆեսորական խորհուրդը որոշում է Մելիք-Օհանջանյանին, իբրև շնորհալի ուսանողի, գործուղել Գերմանիա՝ գերմաներենի գիտելիքները խորացնելու և պրոֆեսոր Ենգլենի մոտ սանսկրիտ սովորելու նպատակով: Գալով Բեռլին նա տեղավորվում է այնտեղ գտնվող Ավետիք Իսահակյանի բնակարանում՝ ընկերական ու բարեկամական ամենասերտ կապերով մտերմանում բանաստեղծի հետ: Բեռլինում գտնվելիս Կ. Մելիք-Օհանջանյանը սեփական նախաձեռնությամբ արտագրում է մեծ բանաստեղծի «Ուստա Կարո» վեպի ձեռագիրը, նրա միօրինակը հնարավոր կորստից կամ պատահարից փրկած լինելու համար:

1915-ին Մելիք-Օհանջանյանը մտերմանում է Բեռլինում ուսանող, ապագայի նշանավոր հեղափոխական Հովսեփ Լազյանի հետ: Նույն թվականին ծանոթանում է աշխարհահռչակ հայագետ Յուզիֆ Մարկվարտի հետ: Վերջինիս միջ-

նորդությամբ Մելիք-Օհանջանյանը թույլտվություն է ստանում որպես ազատ ունկնդիր հաճախելու Բեռլինի համալսարանը, դասախոսություններ լսելու իրեն հետաքրքրող մի շարք առարկաներից (հայերեն, ավեստա, պարսկերեն, դադա քրդերեն, իրանական էպոս, էգեյան կուլտուրա, հռոմեական կայսրության պատմություն, ասորական գրականություն, հին հունարեն, բյուզանդական հունարեն):

1920 թվականին Կարապետ Մելիք-Օհանջանյանը գալիս է Երևան: Այստեղ նա աշխատանքի է անցնում Հանրային կրթության և արվեստի նախարարությունում:

Նույն թվականի դեկտեմբեր ամսին Կարապետ Մելիք-Օհանջանյանը իր ուսանողական տարիների ընկեր Հովսեփ Լազյանի հրավերով սկսում է աշխատել նրա գլխավորած Հայկական Կարմիր բանակի քաղվարչությունում իբրև այդ վարչության կուլտ-կրթական բաժնի վարիչ և «Կարմիր բանակ» թերթի խմբագիր: Նա միաժամանակ կապ է հաստատում Հայաստանի ժողովրդական համալսարանի հետ, դասախոսություններ կարդում հայ գրականություն և գերմաներեն առարկաներից:

1921 թ. Կ. Մելիք-Օհանջանյանը նշանակվում է էջմիածնում գտնվող Խորհրդային Հայաստանի առաջին գիտական ինստիտուտի նախագահ: 1922-ին նորից Երևան փոխադրվելով նա մինչև 1930 թվականը վարում է մի շարք պաշտոններ (Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցի ուսմասվար, Արհլուսգլխավարչության մեթոդական տեսուչ և այլն):

1930—1937 թթ. Կ. Մելիք-Օհանջանյանը եղել է Հայաստանի գիտությունների ինստիտուտի, Նյութական կուլտուր-

րայի պատմութեան ինստիտուտի, Պատմութեան և գրականութեան ինստիտուտի գիտնական քարտուղար, նույն ինստիտուտներէ հին գրականութեան ու ժողովրդական բանահյուսութեան բաժիններէ վարիչ, զբաղվել է երիտասարդ գիտական կադրերի պատրաստման, խմբագրական և հրատարակչական աշխատանքներով:

Գիտահետազոտական աշխատանքով Կ. Մելիք-Օհանջանյանը սկսել է զբաղվել դեռևս ուսանողական տարիներէ:

1913 թվականի հունվար ամսին նա հանդես է եկել հայոց գրերի գլուտի 1500-ամյակի և տպագրութեան 400-ամյակի առթիւ Մոսկվայի Լազարյան ճեմարանում կազմակերպված գիտական նստաշրջանում, կարդալով մի ընդարձակ զեկուցում հայ տպագրութեան մասին:

1914-ին Մելիք-Օհանջանյանը պատրաստում է ուսերեն լեզվով մի շարագրութիւն՝ «Մամիկոնյանների նախարարական տոհմը ըստ Փաւստոսի պատմութեան» թեմայով: Շարագրութիւնը արժանանում է Լազարյան ճեմարանի մասնագիտական դասարանների պրոֆեսորական խորհրդի մրցանակին (4 ամսվա արտասահմանյան գործուղում և մեկական օրինակ նվեր ճեմարանի բոլոր հրատարակութիւններին): Այս աշխատութեան գլուխներէից մեկը՝ «Զեկուցվել է Կայսերական հնագիտական ընկերութեան Մոսկվայի բաժանմունքի գիտական նիստում, որի հիման վրա էլ հեղինակը ընտրվել է նույն ընկերութեան թղթակից-անդամ:

1934-ին հրատարակվում է Կ. Մելիք-Օհանջանյանի «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամիում» ու հայ մատենագրութեան մեջ» ուսումնասիրութիւնը: Այստեղ տրված է մեծ բանաստեղծի ապրած ժամանակաշրջանի

հասարակական-քաղաքական և գաղափարական երևույթների պատկերը, նրա կյանքի ու գործի ընդհանուր բնութագիրը: Հեղինակը հատկապես ծանրացել է Ֆիրդուսու և նրա հուշակավոր «Շահնամեի» հայ իրականության մեջ ունեցած արձագանքների վրա: Նա աղբյուրագիտական-բանասիրական մանրակրկիտ քննության է ենթարկել մինչև այդ հայագիտության և արևելագիտության մեջ պատշաճ լուսաբանություն չգտած այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ «Շահնամեի» պահլավի գրավոր աղբյուրները հայ մատենագրության մեջ, Ֆիրդուսու դուցազններգած իրանի առասպելական ու վիպական մոտիվները Ագաթանգեղոսի և Բուզանդի Պատմություններում: Գիտնականը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս թե ինչո՞ւ իրանի վիպական մոտիվներն ու «Շահնամեն» սակավ են թափանցել հայ մատենագրության մեջ և թե ինչպես դրանք, ընդհակառակը, լավ ընդունելություն են գտել հայ ժողովրդի լայն խավերում:

Կ. Մեխիք-Օհանջանյանի տվյալ աշխատության մեջ կատարված կարևոր ընդհանրացումներն ու եզրակացությունները կարելի է ամփոփել հետևյալ հիմնական կետերի մեջ.

1. Հայերն ու պարսիկները իբրև երկու հարևան ժողովուրդներ իրենց պատմական կյանքում ապրել են քաղաքական ու կուլտուրական նույնօրինակ պրոցես: Նրանք ականատես են եղել պատմական կարևոր իրադարձությունների, որոնք իրենց կնիքն են դրել յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի հետագա երկարամյա կյանքի վրա (քրիստոնեությունը՝ Հայաստանում, զրադաշտականությունը՝ իրանում): Այս հողի վրա էլ ահա, երկու ժողովուրդների վիպական ստեղծագործության մեջ գիտնականը դիտել է մի շարք ակնբախ նմանություններ ու ընդհանրություններ:

2. Իրանի վիսլաշխարհը, որ դարեր շարունակ արհամարհվել ու հալածանքի է ենթարկվել հայ կղերի կողմից իրպես «փօռն և անճոռնի առասպելք», «անմիտ և անհանձար բանից հարմարանք», «առասպելաց բարբաջմունք», հյուրընկալվել է կրոնական ու քաղաքական նախապաշարումներից ազատ հայ աշխատավոր գլուղացու խրճիթում, վերամշակվել ու ազգակցվել է մեր ժողովրդական վեպի ամենից սիրված հերոսի՝ Դավթի բանավոր պատումներին, ծնունդ տալով «Ռոստամ Զալի» և «Բեժան-Մենիժայի» բազմաթիվ հայկական բանավոր ուշագրավ տարբերակներին:

Նույն 1934-ին Կ. Մելիք-Օհանջանյանը հրապարակում է հայ-իրանական ժողովրդական վեպի («Ռոստամ-Զալ») արժեքավոր պատումներից մեկը՝ համապատասխան զիտական առաջաբանով: Բաղդատելով «Շահնամեն», «Բարզունամեն» և իրանական ծագում ունեցող ուրիշ վիպական ստեղծագործություններ «Ռոստամ Զալ» ժողովրդական վեպի հայկական պատումների հետ, Կ. Մելիք-Օհանջանյանը, համապատասխան ղուգահեռների միջոցով հավաստում է, որ հայ բանասացները յուրահատուկ ստեղծագործական վերամշակման են ենթարկել իրենց ծանոթ իրանական վեպը, հայացրել են նրա հերոսներից շատերին, այդ վեպի մի շարք դրվագներ պատմել «Սասնա ծռերի» որոշ դրվագներին նմանությամբ, հայ վեպին հատուկ ստեղծագործական եղանակներով ու ձևով: Իրանական վեպը ամբողջապես հարազատացել, «ազգայնացվել», վերամշակվել է հայ ժողովրդական վեպի ոգու, աշխարհըմբռնման և ձևավորման համեմատ և դարձել է «Սասնա ծռերի» յուրահատուկ ճյուղերից մեկը:

1936-ին Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ և

ընդարձակ ներածականով տպագրվում է «Լենինը հայ ֆուդլորի մեջ» գիրքը: Իր ներածականում (էջ 9—57), նկատի ունենալով Սովետական Միության բազմազգ ժողովուրդներին, մասնավորապես սովետական Արևելքի ու Հյուսիսի ժամանակակից նորաստեղծ բանարվեստը, գիտնականը բնութագրում է նրա հիմնական ժանրերը, բովանդակության ու ձևի առանձնահատկությունները, համեմատում նույն այդ ժողովուրդների ավանդական բանարվեստի հետ: Գիտնականը հատկապես կանգ է առնում Լենինին նվիրված ստեղծագործությունների վրա, բացահայտում դրանց գաղափարական ու գեղարվեստական հատկանիշները, հանդամանալից քննության առարկա դարձնելով հայկական «Լենին փաշա» հերոսական ասքը: Ուշագրավ են Կ. Մելիք-Օհանջանյանի կատարած ընդհանրացումները արդի բանարվեստի, մասնավորապես վիպական երգի վերաբերյալ: Բանագետը գրտնում է, որ մեր օրերում ծնունդ առած բանահյուսական ստեղծագործությունները, մասնավորաբար վերջինիս լենինյան ցիկլը, հնարավորություն են տալիս քայլ առ քայլ հետեւելու այդ ստեղծագործությունների զոյացման և աստիճանական զարգացման փուլերին, ծանոթանալու դրանց կրած ազդեցություններին, փոփոխություններին ու առկա վիճակին, փաստացի օրինակներով լուսաբանելու վիպական բանահյուսության ծագման ու զարգացման օրինաչափություններն ընդհանրապես:

Կ. Մելիք-Օհանջանյանի կարծիքով սովետական նորոգ բանարվեստը հետաքրքրական է նաև իր ձևի՝ գեղարվեստական պատկերավորման միջոցների առումով: Բանագետը քննության առարկա է դարձնում մասնավորապես ավանդական և նորաստեղծ բանարվեստի միաձուլման երևույթը, հին

ձեռի և նոր՝ բովանդակության համատեղման ընթացքո, հնի փոխակերպումը նոր գաղափարախոսությամբ համակված ժամանակակից միջավայրում: Իր խոսքը մասնավորելով «Լենին փաշա» վիպասքով, դիտնականը գտնում է, որ վերջինս ներկայանում է մեզ իբրև «Սասնա ծռերի» բարերար աղդեցությունը կրած ինքնատիպ մի հորինվածք:

1945-ին տպագրվում է Կ. Մելիք-Օհանջանյանի «Մովսես Խորենացու Հայոց պատմության երկու պատառիկ» խորագրով հոդվածը: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող «Տոնականի» և «Ճառերնորի» Խորենացուց քաղված երկու նոր ձևոք բերված պատառիկների մի շարք տրվյալներ բաղդատելով՝ «Պատմության» 1913 թ. քնական բնագրի համապատասխան հատվածների հետ, աղբյուրագետը ցույց է տալիս, որ նորագույն այդ պատառիկներն ունեն մի քանի ընտիր ընթերցվածներ, որոնք քերականորեն ճիշտ լինելով, իմաստի պարզություն են մըտցրնում բնագրի մեջ, ինչպես նաև մի ավելորդ անգամ հաստատում այն ճշմարտությունը, որ հին բնագրերը հաճախ դիտակցաբար և անգիտակցաբար աղճատվել են գրիչների կողմից: Գիտնականը իրավացիորեն ընդգծում է, որ նման կարգի պատառիկները կարող են ավելի արժեքավոր հանդիսանալ տվյալ հեղինակի բնագիրը վերականգնելու կապակցությամբ, քան նրա մեզ հասած ամբողջական օրինակը: Բանասերը ելնում է այն ճիշտ մեկնակետից, ըստ որի եթե մեր հին ականավոր հեղինակների ամբողջական գործերը հետին դարերի ընդօրինակությամբ են մեզ հասել, ապա նրանց երկասիրություններից առանձին հատվածներ պահպանվել են ավելի վաղ շրջանի զանազան ժողովածուներում («Ճառերնոր», «Ոսկեփորիկ», «Տոնական» և այլն): Ուստի և

այդ բեկորները՝ վերարտադրելով ավելի հին և հաճախ ավելի ընտիր ընթերցվածներ, դյուրություն են ընձեռում վերականգնելու տվյալ հեղինակի ժամանակի ընթացքում աղճատված բնագիրը:

1946-ին լույս է տեսնում Կ. Մելիք-Օհանջանյանի «Միթրա-Միհրը Սասնա ծռերի մեջ» հետազոտությունը: Այն նվիրված է հայ դիցաբանական պանթեոնի լուսաբանության կարոտ մի քանի կարևոր հարցերի (Միթրա-Միհրի հայանուն արբանյակները, ժուկ ու ժամանակի ժողովրդական հավատալիքը, Հայկ համաստեղության անունն ու էությունը):

Հետաքրքրական է հեղինակի առաջ քաշած վարկածը հայոց ավանդական նախահոր՝ դյուցադն Հայկի վերաբերյալ: Ըստ այդ վարկածի Հայկի և Բելի կռիվն նվիրված վիպաառասպելական հայտնի դրվագում, որ բերված է Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, պետք է դիտել երկու տարբեր էթնիկական միավորների պատկանող ժողովուրդների գաղափարական պայքարի արտահայտությունը: Մելիք-Օհանջանյանը գտնում է, որ՝ Բել = Քրոնոսը Ասորեստանի հավաքական ուժի անձնավորումն է, իսկ Հայկ = Քրոնոսը՝ Հայաստանինը: Քանի որ երկու հակառակորդ ցեղեր կռվում են իրար հետ, ապա բնական է, որ նրանց գերագույն աստվածներն էլ պայքարի դուրս գան մեկը ընդդեմ մյուսի: Զբաղարարվելով լոկ տրամաբանական այս հիմնավորմամբ, գիտնականը բերում է նաև համապատասխան փաստարկներ ինչպես հայ, այնպես էլ ուրիշ ժողովուրդների լեզվի, բանահյուսության, պատմության ու հնագիտության բնագավառներից:

Պակաս հետաքրքրական չէ նաև այն փորձը, որ կա-

տարում է Կ. Մելիք-Օհանջանյանը Հայկի կերպարի «Սասնա ծռերի» մեջ ունեցած արձագանքները գտնելու ուղղությամբ, հենվելով Մանուկ Աբեղյանի 1908 թվականին հայտնած կարծիքի վրա: Ըստ այդ կարծիքի «Մեր հին առասպելները և նոր վեպի մեջ եղած առասպելական մոտիվների նույնութունն այն աստիճան է, որ կարելի է կարծել նույնիսկ, թե նոր վեպը հին վիպասանքն է, որ մինչև այժմ կենդանի մնում է՝ միայն կրելով դարերի պատմական ազդեցությունը ... և որ դյուցազնական առասպելները, որոնք հիմք ունին հին հեթանոսական հավատալիքները, միշտ նորոգվելով հարուստ են առնում»¹: Բանագետը հավաստում է, որ փոխանցման, «նորոգման» կամ «հարուստ առնելու» այդ ընթացքը վերապրել է նաև Հայկի առասպելը: Նա հետաքրքիր օրինակներով ցույց է տալիս, որ դյուցազն Հայկը «Սասնա ծռերի» մեջ հանդես չի գալիս իբրև մի միասնական, կենդանի ու ամբողջական հերոսական կերպար: Հայկի հատկանշական դիմագծերը ցրված են, վերաբաշխված վեպի մի շարք կերպարների, և գլխավորապես երկու մարդկայնացած հերոսների մեջ: Դրանք են մի կողմից՝ կյանքը ժողովրդի բարօրության համար զոհաբերող, հայրենի երկրի ազատությունն ընդդեմ բռնակալ Մսրա Մելիքի պաշտպանող հերոսական Դավիթը, մյուս կողմից՝ հայրենի երկրի բարեկեցության մասին մտածող, շեներ ու բնակավայրեր կառուցող, սերունդը հովանավորող, աճեցնող, վերջինիս մասին հոգացող, խրատ ու դաստիարակություն տվող Քեռի Թորոսը, որոնք ավանդույթի ուժով ժառանգել

¹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 180—181:

են հին հայկական պանթեոնի աստվածների ու դյուցազունների հայր, ամենակարող Հայկի հիմնական հատկանիշները 1947-ին տպագրվում է Կ. Մելիք-Օհանջանյանի բանագիտական նոր ուսումնասիրությունը՝ «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի» վերնագրով:

Մեկնակետ տնենալով հայ և այլազգի որոշ հայագետների, մասնավորապես Մանուկ Աբեղյանի տեսակետը Բուզանդի Պատմության բանահյուսական ակունքների վերաբերյալ, ինչպես և նկատի ունենալով Ն. Ադոնցի ու Մարկվարտի կողմից՝ հույն, լատին և պարսկական աղբյուրներից վկայակոչված համապատասխան տեղեկությունները 3—4-րդ դարերում Մերձավոր Արևելքում և Հայաստանում տեղի ունեցած պատմաքաղաքական իրադարձությունների մասին, հեղինակը ցույց է տալիս, որ Բուզանդի Պատմության 3-րդ դարում 20 և 21-րդ գլուխները, ուր վերարտադրվում են Հայոց Տիրան թագավորի հետ կապված դեպքերն ու դեմքերը, ամբողջապես վիպական ծագում ունեն:

Իր առաջ քաշած հիշյալ դրույթը բանագետը հավաստում է հետևյալ համոզիչ փաստարկներով.

1. Բուզանդի հաղորդումները Տիրան թագավորի օրոք Հայաստանում կատարված քաղաքական-հասարակական իրադարձությունների վերաբերյալ՝ չի հաստատվում նույն այդ իրադարձություններին տեղյակ ժամանակակից օտար պատմական գրավոր աղբյուրների տվյալներով, ուստի և պետք է ենթադրել, որ սլատմիչը, ամենայն հավանականությամբ, օգտվել է հայ ժողովրդական վեպից ու զրույցներից:

2. Այդ հաղորդումներն իրենց բնույթով համընկնում են այն վիպական մոտիվներին, որ գտնում ենք ինչպես հայ, այնպես էլ այլազգի բանահյուսական հուշարձաններում,

ուստի և կարելի է հաստատապես պնդել, որ դրանց համար հիմք են ծառայել համապատասխան բանավոր սկզբնաղբյուրներ:

Այդ են հաստատում նաև Տիրան-Տրդատի կյանքի հետ կապ ունեցող Բուղանդի հիշատակած բոլոր տեղանունները՝ Աղիորսք, Դալարիս-Ածուղ և Ոսխա-Ոխսա: Դրանք ոչ թե մինչ Տիրան-տրդատյան Հայաստանի իրական-պատմական աշխարհագրական անուններ են, այլ անորոշ ու անհայտ վայրեր, որոնք այդպես են «կնքվել» ժողովրդական վիպասանների և դուսանների կողմից: Այդ է հաստատում և Ճարտուկ-Ճանճկեն երիվարի միջադեպը, ֆուլկլորային շրջիկ մի մոտիվ (սև՝ ադրբեջանական «Քյոռողլի»-ն, քրդական «Կառու Քուլուկ»-ը և այլն), որը հարակցման կարգով միացել է Տիրան-Տրդատի վեպին և վերամշակվել ու տեղայնացվել Հայաստանում ծավալված քաղաքական, ռազմական և հասարակական իրադարձությունների համեմատ:

1957-ին Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ ու առաջաբանով լույս է տեսնում «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» վերնագրով գիրքը: Գրքին կցված իր առաջաբանում տալով միջնադարյան հայ գեղարվեստական արձակի ընդհանուր բնութագիրը և նշելով տվյալ ուղղությամբ մեղանում հղած աշխատանքները, Կ. Մելիք-Օհանջանյանը կանգ է առնում գրական առկա ժանրերի հանգամանալից ուսումնասիրության անհրաժեշտության հարցի վրա, առաջադրում այդ ուղղությամբ առաջիկայում տարվելիք աշխատանքների ծրագիրն ու հիմնական թեզերը:

Առաջաբանի հեղինակը բնութագրում է նախ և առաջ «Հայելի վարուց» անունով միջնադարյան զրույցների ու կարճառոտ պատմությունների հայտնի ժողովածուի և նման-

օրինակ մի երկու ուրիշ հավաքածուների («Հարանց վարք» և այլն) ծագումն ու բովանդակությունը, բացահայտում վերջիններիս ստեղծման հանգամանքները, վեր հանում այն աղբեցությունը, որ ունեցել են դրանք միջնադարյան հայ ինքնուրույն արձակի առաջացման ու ձևավորման գործում:

Նույն տեղում տրվում է միջնադարյան հայ գեղարվեստական արձակի տարբեր ժանրերի (վարքաբանություն, խրատականներ, հրաշապատումներ, տեւիլքներ, սլարականոն գրքեր, միստերիաներ) բովանդակության և ձևական առանձնահատկությունների սեղմ բնութագիրը, նշվում են դրանցից յուրաքանչյուրի հասարակական և դրական-գեղարվեստական բնորոշ հատկանիշներն ու արժանիքները:

Առանձնապես արժեքավոր է գիտնականի այն դրույթը, որով հավաստվում է՝ թե վերոհիշյալ ժանրերին պատկանող ստեղծագործությունների մի զգալի մասը մեղանում ունենալով թարգմանական բնույթ, ըստ էության տարբերվում է սովորական թարգմանություններից: Դրանք, նրա կարծիքով, ավելի շուտ վերապատումներ կամ փոխադրություններ են, քան սովորական թարգմանություններ: Հեղինակը իրավացիորեն նշում է, որ այստեղ շատ հաճախ օտար նյութը հայ «թարգմանչի» գրչի տակ ազդայնանում էր, երբեմն նոր միջադեպեր ներմուծվում, երբեմն էլ գործողության վայրը Հայաստան փոխադրվում և հայ ընթերցող, ունկնդրող հասարակության մեջ ընկալվում որպես հարազատ միջավայրի դոյի ու գիտակցության արտացոլումներ:

Նշելով վերոհիշյալ հանգամանքներից. Կ. Մելիք-Յահնջանյանը հուշում է, որ «թարգմանություն» կոչված այդ ստեղծագործությունները պետք է դիտվեն որպես ազգային

գրականության զարգացման պատմությունը շաղկապող օղակներ և ըստ այսմ քննության առնվին հայ հասարակական հոսանքների ու այդ հոսանքները բնորոշող գրական հուշարձանների հետ համընթաց:

Տարիներ անց, 5-րդ դարի հայ գեղարվեստական արձակին նվիրված իր ուսումնասիրության մեջ, անդրադառնալով վերոհիշյալ դրքի հրապարակման գործում Կ. Մելիք-Օհանջանյանի կատարած դերին և կանգ առնելով հատկապես նրա առաջաբանի վրա, Մ. Ավդալբեգյանը իրավացիորեն գրել է. «Միջնադարյան արձակի ուսումնասիրության բնագավառում մի նորույթ էր պրոֆ. Կարապետ Մելիք-Օհանջանյանի խլամ-բաղրությամբ 1957 թվականին լույս տեսած «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» ժողովածուն, ոչ այնքան նյութի իր ընդգրկմամբ, որքան հարցի մոտեցմամբ ու ներկայացմամբ:

Միջնադարյան արձակի ժողովածուն հրապարակ բերելու դադափարն իսկ, որ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի առջև դեռևս 1945 թվականին բարձրացրել էր պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը, և նյութերի ընտրության նրա սկզբունքն ինքնին բացահայտում են այն գիտական տեսակետը, թե հայ հին գրականության մեջ գեղարվեստական արձակ պետք է որոնել ոչ միայն որոշակի ձևավորում ստացած մանրապատումներում, այլ նաև ավելի վաղ հանդես եկած եկեղեցա-պատմական գրական տեսակներում:

...Որոշ «զուտ եկեղեցական» գրական տեսակներ, ինչպիսիք են տեսիլները, պարականոնները, միասերիաները, հրաշապատումները և այլն, էլ չենք ասում վարք-վկայաբանությունները, որոնք վաղուց արդեն, եկեղեցական համար-

վելու հետ մեկտեղ, ճանաչում էին ստացել իբրև պատմական ստեղծագործություններ,— իրենց որոշակի առանձնահատկություններով դիտվեցին իբրև գեղարվեստական արձակի տեսակներ և, չնայած խիստ համառոտակի, բնութագրվեցին դիպուկ և իրենց սահմաններում գրեթե սպառիչ¹։

1961-ին լույս է տեսնում Կ. Մելիք-Օհանջանյանի հայագիտական մեծարժեք աշխատասիրություններից մեկը՝ Դա 13-րդ դարի հայ նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» քննական-համեմատական բնագիրն է, ընդարձակ առաջաբանով և գիտական հարուստ ապարատով։

Մեր լավագույն հայագետների կողմից մշակված բնագրաբանական օրինակելի սկզբունքներով, մի շարք տարիների տքնաչափ ու մանրակրկիտ աշխատանքով գլուխ բերված մի գործ է դա, արժանի ամենայն երախտագիտության ու գնահատանքի։ Կատարված աշխատանքի ծանրության մասին պատկերացում տալու համար բավական է հիշատակել, որ խնդրո առարկա բնագիրը կազմվել է Գանձակեցու՝ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 30 ամբողջական ու թերի ձեռագիրների և 3 տպագիրների բանասիրական մանրակրկիտ բաղդատության ու համադրության միջոցով²։

1 Մ. Ավդալբեգյան. Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը Երևան, 1971, էջ 24—28։

2 Այս գործում անվանի գիտնականին յուրովսանն օգնել է վաղամեռիկ առաջնորդը ու բանիրուն երիտասարդ բանասեր, Փալստոս Բուղանդին և Հովասեփ Սեբաստացուն նվիրված տպագիր արժեքավոր աշխատությունների հեղինակ Վախթանգ Գևորգյանը, որը, ինչպես գրել է իր Առաջաբանում ինքը՝ Կ. Մելիք-Օհանջանյանը՝ «ընթերցել է բաղդատ-

Քննության առարկա աշխատության արժեքը, սակայն, միայն նրա դիտական-համեմատական բնագրի պատրաստման մեջ չէ։ Հատորին կցված շուրջ 7 մամուլ Առաջաբանում հանգամանորեն ներկայացված են Գանձակեցու կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը, պատմարանասիրական քննության են ենթարկված նրա «Հայոց պատմության» հորինվածքի, ամբողջականության և աղբյուրների հարցերը։ Մանրամասն խոսելով Գանձակեցու Պատմության մասին, որպես 13-րդ դարի մեր մյուս մատենագիրների երկերի սկզբնաղբյուրի, և վերլուծելով ու գնահատելով նրա աշխատության պատմագիտական և գրական-գեղարվեստական արժեքը, հեղինակը միանգամայն իրավացիորեն դիտում է,

1. Մեզ ժառանգություն մնացած հարուստ հայ պատմագրության մեջ Կիրակոսի այս երկասիրությունը թե՛ ըստ ժամանակի (ԺԲ—ԺԳ դդ.) և թե՛ հարուստ բովանդակության կողմից առաջնակարգ պատմագրական սկզբնաղբյուր է ...որ ընդարձակորեն խոսում է թուրք-թաթարական-մոնղոլական ժողովուրդների, նրանց նվաճումների և նվաճած երկրներում՝ Հայաստանում, Աղվանքում, Վրաստանում և այլուր ստեղծած քաղաքական-վարչական և սոցիալ-տնտեսական պայմանների մասին։

2. Կիրակոս Գանձակեցին գրչի վարպետ է և կարողանում է իր մտքերն ու հույզերը այնքան պարզ ու պայծառ արտահայտել, որ համակում է ընթերցողին, մեկ-մեկ էլ

վող ձեռագիրը և իր բարեխիղճ ու ջանադիր աշխատանքով նպաստել է նրան բերելու կարևոր ընթերցվածք, ըստ այդմ և ընդհանուր գործի հաջողությանը» (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությունը Կ. Մելիք-Օհանջանյանի, Սրեան, 1961, էջ 23Ժ)։

այնքան է տարվում իր նյութի նկարագրությամբ ու վերլուծությամբ, որ գեղարվեստական հաճույք է պատճառում նրան և ընդլայնում նրա մտավոր հորիզոնը:

Պակաս արժեքավոր չէ նաև Գանձակեցու Պատմության ներկա հրատարակության համար Կ. Մելիք-Օհանջանյանի պատրաստած գիտական ապարատը: Վերջինս բաղկացած է պատմիչի նկարագրած ժամանակներին վերաբերող հայ և օտար գահակալների ժամանակագրությունից, անձնանունների և տեղանունների ցանկերից և տեքստաբանական առաջաբանից, ուր աշխատասիրողը խոսում է տվյալ քննական-համեմատական բնագիրը կազմելու հանգամանքների մասին, տալիս Կիրակոսի բաղմաթիվ ձեռագիրների ու տպագիրների բանասիրական նկարագրությունը, որոնք կարևոր են Գանձակեցու վերարտադրած ժամանակները պատկերացնելու և նրա Պատմության բաղմաթիվ օրինակների առանձնահատկություններն ու արժեքը պարզելու համար:

1962-ին Կ. Մելիք-Օհանջանյանի ընդարձակ առաջաբանով, Շ. Սմբատյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի թարգմանությամբ, Շ. Սմբատյանի ծանոթագրություններով նրեվանում ուսերեն լեզվով հրատարակվում է Կորյունի «Վարք Մաշտոցի» վերնագրով գործը:

Կ. Մելիք-Օհանջանյանի գործուն մասնակցությամբ իրականացված այս աշխատության արժեքն ու նշանակությունը մեծ է նրանով, որ առաջին անգամ ուսերենի միջոցով գիտական լայն հասարակայնության և մասնագետների սեփականություն է դառնում հայ ժողովրդի ամենամեծ երախտավորներից մեկի, հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի կյանքին ու գործին նվիրված անփոխարինելի մի սկզբնաղ-

բլուր, ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը հավաստող առաջին պատմական գրավոր վավերականը:

Ինչ վերաբերում է Կորյունի գրքի ռուսերեն թարգմանության համար գրված Կ. Մելիք-Օհանջանյանի առաջաբանին (էջ 5—71), ապա, վերջինիս շնորհիվ ռուս գիտական հասարակայնությունը և մասնագետները կարող են ճշմարտացի պատկերացում ստանալ հիշյալ վավերաթղթի գրության ժամանակի, նրա հեղինակի անձնավորության, գրվածքի ժանրային առանձնահատկության, պատմական, գրական արժեքի և հարակից այլ խնդիրների վերաբերյալ:

1964 և 1968 թթ. լույս են տեսնում Կ. Մելիք-Օհանջանյանի բանագիտական երկու արժեքավոր հոդվածները, որոնք կրում են՝ «Ազաթանգեղոսի բանահյուսական աղբյուրների հարցի շուրջը», «Ազաթանգեղոսի պատմությունն ու նրա ժողովրդական բանավոր սկզբնաղբյուրները» խորագրերը: Ընդհանուր հոգովա՞ծներն էլ շարադրված են գիտնականի բազմամյա հետախուզումների արդյունք հանդիսացող «Լուսավորչի վեպը» ձեռագիր աշխատության հիման վրա: Բանագետն այստեղ հավաստում և պատմադրական ու բանահյուսական նոր, հարուստ փաստերով հաստատում է հայագիտության մեջ մինչ այդ արդեն արձանագրված այն իրողությունը, ըստ որի Ազաթանգեղոսի «Պատմությունը» ոչ այլ ինչ է, բայց եթե ժողովրդական վիպական մոտիվների մի արժեքավոր ժողովածու, ենթարկված հեղինակային (գրական-գաղափարախոսական) հիմնական վերամշակման:

Կ. Մելիք-Օհանջանյանի կարծիքով՝ Ազաթանգեղոսի վիպական այդ մոտիվների մի մասը մատենագրական ծագում ունի որպես գրական փոխառություն, որն իր հերթին սերում է ժողովրդական բանահյուսությունից, մյուս մասը

սերտորեն շաղկապված է հայ իրականության հետ իբրև Հայաստանի իրական-պատմական իրադարձությունների վիպական-բանահյուսական արձագանք։ Ազաթանգեղոսի կողմից հյուրընկալված բանահյուսական նյութերի մեջ, ըստ հեղինակի, կան նաև շրջիկ ժողովրդական-վիպական մոտիվներ, որոնք հնուց ի վեր տարածված են հղել իրանի բարձրավանդակից մինչև հեռավոր Եվրոպա, եգիպտական անապատներից մինչև Ռուսաստանի և Մոնղոլիայի տափաստանները։

Ազաթանգեղոսի «Պատմության» մեջ պահպանված բանահյուսական նյութերը Կ. Մելիք-Օհանջանյանը բաժանում է չորս հիմնական վիպական ցիկլերի. 1. Մինչ-Գրիգորյան կամ հայ-իրանական, 2. Տրդատյան, 3. Լուսավորչի վեպը և 4. Տրդատ և Հռիփսիմի։

Հանգամանորեն կանգ առնելով «Լուսավորչի վեպի» վրա, հեղինակը մերթ ընդ մերթ անդրադառնում է նաև վերոհիշյալ մյուս վիպաառասպելական ցիկլերին և մեր հին ու նոր ժողովրդական վեպերին։

Բանագետի հավաստմամբ Գրիգորի «կյանքի» մանկության հատվածն իրական-պատմական չէ։ Հայ մատենագիրների հաղորդումները նրա մանկության մասին գոյություն են ունեցել «պատմական» Գրիգորից դարեր առաջ և պատմվելիս են հղել, ինչպես այդ ցույց են տալիս հարևան այլ ժողովուրդների առասպելները արևի ու քարնան բուսականության աստվածության մասին, որն ամենայն հավանականությամբ պաշտվել է նաև հին Հայաստանում, ունենալով «Լուսավորիչ» անունը կամ մականունը։ Հետագայում այդ հեթանոսական առասպելը միաձուլվել է Գրիգորի «պատմությանը» և քրիստոնյա հայ կղերի ձեռքով վերա-

մշակվել ու նվիրագործվել, հիմք ընդունելով, ի շարս այլ «պատմությունների», առանձնապես Մովսես մարգարեի և ուրիշների մանկության «պատմությունը»: «Լուսավորչի վեպի» պատմականացումը տեղի է ունեցել մի կողմից, տուրք տալով հայ-ասորական կղերի առաջնության հավանություններին (Գրիգորը համարվել է Պարթև Արշակունիների օրինական ժառանգ), մյուս կողմից բավարարություն է տրվել հունա-սիրիական կրոնական-քաղաքական հոսանքին (Պարթևազն Գրիգորը դարձել է հունական հոգևոր մշակույթի սան):

Նույն 1966 թ. լույս է տեսնում Կ. Մելիք-Օհանջանյանի մի նոր աշխատությունը՝ «Պատմութիւն Փարէզի եւ Վեննայի և Պատմութիւն Վենետիկ քաղաքին» ընդհանուր վերնագիրը կրող գիրքն է դա, որն ամփոփում է Հովհաննես Տերզնցու (1567 թ.) և Խաչատուր Եվդոկացու (1611 թ.) գրիչներին պատկանող երկու միջնադարյան գրական հուշարձաններ, որոնք մինչ այդ տպագրված չէին մեզանում: Երկու հուշարձաններն էլ գիտնականի կողմից ներկայացված են իրենց բնական-համեմատական բնագրերով, պատրաստված Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի, Փարիզի ազգային գրադարանի և ուրիշ գրչագիր օրինակների միկրոֆապավենների հիման վրա: Գիրքն ունի նաև ընդարձակ «Ներածություն», ուր լուսաբանված են Տերզնցու կյանքի ու պորժի հանգամանքները, նրա կատարած հայերեն փոխադրություն-թարգմանության հարցը, բացահայտված են Պատմության հայատառ թուրքերեն տարբերակի բնույթն ու առանձնահատկությունները, գնահատված է Պատմության հայերեն

փոխադրութեան պատմագրական արժեքը և ուրիշ հարակից հարցեր:

Բաղդատելով իրար հետ «Փարէզի և Վեննայի պատմութեան» իտալական, ռուսական և հայկական խմբագրութիւնները, գիտնականը գալիս է հետևյալ եզրակացութեան.

1. Հայկականը թարգմանված չէ ոչ ֆրանսերենից, ոչ լատիներենից և ոչ էլ իտալերենից: Դա մի ազատ փոխադրութիւն է, որ հիմնականում վերարտադրում է սիրավեպի բովանդակութիւնը՝ աստիճանաբար զարգացնելով նրա շարադրանքը, հասցնելով մինչև հանգույցի բախտավոր լուծումը՝ սիրահար զուգի երջանկութիւնը:

2. Հայկականը, որ շափածո է հորինված, կախումն չունի ֆրանսիական արձակ բնագրից, նման չէ նաև իտալական շափածո ութնյակներով հորինված պոեմին: Միաժամանակ, նկատի ունենալով իտալականի և հայկականի որոշ նմանութիւնները, Կ. Մելիք-Օհանջանյանը շատ հավանական է համարում, որ հայ հեղինակը աչքի առաջ ունեցել է ութնյակներով հորինված իտալական վերամշակութիւնները, բայց ինքը շարադրել է հայ պոեզիայում տիրապետող տասնմեկ վանկանի տաղաչափութեամբ:

Ինչ վերաբերում է «Վենետիկ քաղաքի պատմութեանը», ապա, մանրամասն վերլուծման ենթարկելով նրա բովանդակութիւնը, Կ. Մելիք-Օհանջանյանը գտնում է, որ այդ պատմութեան հեղինակը պետք է եղած լինի մի անձնավորութիւն, որը երկար ժամանակ ապրել է Վենետիկում և յուրացրել է վերջինիս բնակիչների լեզուն ու բարոյաքաղաքական հասկացութիւնները: Գիտնականի պրպտումները նրան տանում են դեպի Գրիգոր Դարանաղեցու հիշատակած Խաչատուր Թոխատցին, որը և կրում է տվյալ գրական հու-

շարձանի հեղինակի անունն ու մականունը: Նա եղել է Իտա-
լիայում, ենթարկվել հավատափոխման քննության, իր անձի
վրա զդացել է Վատիկանի սարսափելի տանջանքները և
այլն:

• • •

Առանձնապես ծանրակշիռ և նշանակալից են այն աշ-
խատանքները, որ կատարել է Կ. Մելիք-Օհանջանյանը հայ
ժողովրդական վեպի սկզբնաղբյուր-պատումների գրառման,
գիտական հրատարակության և թարգմանության մարզում:
Այս տեսակետից պետք է առաջին հերթին հիշատակվի նրա
շնորհակալ մեծ դորժը «Սասնա ծռերի» նոր պատումների
հայտնաբերման ուղղությամբ: Որքան էլ տարօրինակ, սա-
կայն անհերքելի է այն, որ մինչև 1930-ական թվականները
մենք չենք ունեցել Սասունում ծնված և իր հիմնական բո-
վանդակությամբ, աշխարհագրական տեղավայրերով, գլխա-
վոր դեպքերով ու դեմքերով վերջինիս հետ սերտորեն կապ-
ված մեր ժողովրդական վեպի բուն Սասունի պատումները,
չնայած այն հանգամանքին, որ դրանց գրառումը մեզանում
սկսվել է տակավին անցյալ դարի 70-ական թվականներից:
Կարապետ Մելիք-Օհանջանյանն է այն առաջին գիտնականը
մեզանում, որը հատուկ ուշադրություն դարձնելով այդ խընդ-
րին, հայտնաբերել ու տպագրել է «Սասունցի Դավթի» երկու
արժեքավոր պատումները բուն Սասունի բարբառով: Դրան-
ցից առաջինը նա գրի է առել 1932 թ. Թալինի շրջանի Ի-
րինդ գյուղում, Սասունի Ճախրական գյուղացի 85-ամյա
Քեռի Թամոյից, որը սասունցիների մեջ հայտնի է եղել
իբրև լավ բանասաց, «Սասնա ծռերի» ստուգապատում
պատմության միակ գիտակն ու անաղարտ պահպանողը:

Կ. Մելիք-Օհանջանյանի վկայությամբ Քեռի Թամոն «Տավթի բաղմուխությունը» եղելություն է համարել, ասելով միաժամանակ, որ ինքը, իբր թե, տեսել է «Տավթի գիրքը», որը մեկ լիտր է քաշել և պահվել է Սասունի Գոմաց վանքում, և որ հետագայում, կոիվներին ժամանակ, քրդերը այրել են այդ գիրքը:

«Սասնա ծռերի» սասունական հրկրորդ պատումը Կ. Մելիք-Օհանջանյանը գրի է առել նույն 1932 թ. Թալինի շրջանի Աշնակ գյուղում, դարձյալ բնիկ սասունցի, Գոմրդեր գյուղացի Առաքել Սարուխանյանից, որը «Սասնու Տավթի» իր պատումը լսել է հայրենիքում եղած ժամանակ:

Բացի պատմական հատուկ արժեք ներկայացնող վերոհիշյալ հրկու պատումներից բանագետն անձամբ գրի է առել հայ ժողովրդական վեպի ուրիշ 6 կարևոր պատումներ ևս (2 հատ Ալաշկերտի, 1 հատ Մոկաց, 2 հատ Շատախի, 1 հատ Կաճեթի բարբառներով): Վերջիններիս մեջ պետք է առանձնապես նշել ալաշկերտցի Մանուկ Թորոյանի պատումը, որը իրավացիորեն համարվում է «Սասնա ծռերի» մեզ հայտնի բոլոր պատումներից ամենաընդարձակներից ու լավագույններից մեկը¹:

Հայ ժողովրդական վեպի բնագավառում Մելիք-Օհանջանյանի կատարած մյուս աշխատատար և ծանրակշիռ գործը՝ դա «Սասնա ծռերի» 1000-ական էջանոց հրկու հատորների հրատարակության պատրաստման մեջ նրա ունեցած գործոն մասնակցությունն է:

Հայտնի է, որ երբ տարիներ առաջ Հայաստանի պետհրատը իր գեղարվեստական բաժնի վարիչ Նդիշե Զարենցի

¹ Նշված 8 պատումներից 4-ը տպագրված է «Սասնա ծռերի» Ա հատորում (1936), իսկ 4-ը՝ Բ հատորի Ա գրքում (1944):

միջոցով առաջարկեց Մանուկ Աբեղյանին հանձն առնելու «Սասնա ծռերի» ժողովրդական սկզբնաղբյուր-պատումների գիտական ամբողջական հրատարակության պատրաստման դործը, մեծանուն հայագետը առկա սակավաթիվ բանագետներից իրեն դործակից ընտրեց Կ. Մելիք-Օհանջանյանին:

1932 թ. մեծ ջանադրությամբ ձեռնարկելով «Սասնա ծռերի» պատումների հրատարակությանը, Կ. Մելիք-Օհանջանյանը Մանուկ Աբեղյանի հետ միասին մի շարք տարիների ընթացքում հավաքեց, դասակարգեց ու խմբագրեց Վեպի հրապարակում եղած տպագիր, անտիպ և նոր գրի առնված շուրջ 53 պատումներ: Աբեղյանի հետ նա պատրաստեց «Ծռերի» հատորների յուրաքանչյուր բարբառային խմբին կցված ներածականները՝ բաղկացած համապատասխան քերականական գիտելիքներից, աշխարհագրական, աղբյուրական ու այլ կարգի տեղեկություններից, կազմեց անհրաժեշտ ծանոթագրություններ վեպի պատումներում դրսևորված առասպելական, պատմական, կենցաղային և այլ մոտիվների ու երևույթների վերաբերյալ, պատրաստեց պատումներում դործածված օտար և բարբառային բառերի ու դարձվածքների ընդարձակ բառարանը: Աբեղյանի հետ միասին նա գրեց նաև «Ծռերի» առաջին հատորի սկզբում դրված ներածականը, ուր բնութագրված է Վեպի ծագումն ու կաղմուկյունն ընդհանրապես և «Սասունցի Դավթի» պատմականությունը, սոցիալական բնույթը, գեղարվեստական առանձնահատկությունները՝ մասնավորապես: Մանուկ Աբեղյանի մահվանից հետո (1944 թ.) Մելիք-Օհանջանյանը կազմեց «Ծռերի» բոլոր պատումների ճշուղագրությունը, հատուկ անոմների ու առարկայական լիակատար ցանկերը, պատրաստեց վեպի տարածման աշխարհագրական քարտեզը,

որոնք լույս տեսան 1951 թ. Վեպի Բ հատորի Բ մասի լիբրշում:

«Սասնա ծռերի» հատորները անսպառ դանձարան են ոչ միայն հայագիտության տարբեր մարզերի աշխատողների ուսումնասիրության, այլև մեր գրողների ու արվեստագետների նորանոր ստեղծագործական հղացումների համար: Ահա թե ինչու Մանուկ Աբեղյանի և Կարապետ Մելիք-Օհանջանյանի կողմից այդ հատորների վրա կատարված բազմամյա բեղմնավոր աշխատանքը ունի կուլտուր-պատմական մնայուն արժեք ու նշանակություն:

Կ. Մելիք-Օհանջանյանը յուրովսանն նպաստել է նաև հայկական էպոսի միջազգային տարածմանը, «Սասնա ծռերի» համբավը Հայաստանից մինչև Եվրոպա ու Ամերիկա հասցնելու գործին: Նրա մասնագիտական կարևոր դիտողությունները հաշվի առնելով են կատարվել «Սասունցի Դավթի» անգլերեն (Լ. Զ. Սյուրմեյան), ֆրանսերեն (Ֆ. Ֆելդի), լեհերեն (Ի. Սիկիրեցկի) և էստոներեն (Բ. Կաբուր) թարգմանությունները:

Հայտնի է, որ ամերիկահայ անվանի գրող Լեոն-Ջավեն Սյուրմեյանը վեպի իր կատարած անգլերեն թարգմանությունը բնագրին ավելի հարազատ և առավել ճշգրիտ դարձնելու նպատակով հեռավոր Լոս-Անջելոսից բերեց նրեան, Կ. Մելիք-Օհանջանյանի հեղինակավոր խորհուրդները լսելու և նրա հավանությունը ստանալու համար¹: Նույն կերպ վարվեցին նաև Ֆրեդերիկ Ֆելդին, Իգոր Սիկիրեցկին² և Բորիս Կաբուրը:

1 Տե՛ս Խ. Դաշտենցի հոգվածը «Սասունցի Դավթի էպոսը անգլերեն» («Սովետական Հայաստան» օրաթերթ, 1966, № 37):

2 Տե՛ս Ի. Սիկիրեցկու լեհերեն թարգմանության առաջաբանի հայերեն թարգմանությունը («Գրական թերթ», 1967 թ., № 52):

Ի լրումն հայկական էպոսի բնագավառում Կ. Մելիք-Օհանջանյանի կատարած բազմաթիվ շնորհակալ գործերի, հիշենք մի կարևոր փաստ ևս: Գիտնականի մտահղացմամբ և նրա անմիջական ու գործուն դրդումով Երևանի քաղաքային սովետը հաշվի առնելով Հայաստանի գրողների միության վարչության համապատասխան միջնորդությունը՝ 1962 թվականին Երևան քաղաքում շիրմաքար-հուշարձան կանգնեցրեց «Սասնա ծռերի» լավագույն բանասացներից մեկի՝ ալաշկերտցի Մանուկ Թորոյանի (Թորոյի Մանուկ) դերնգմանին: Հայ ժողովրդի բազմադարյան կյանքում իր նախադեպը չունեցող. պատմական միջոցառում էր դա, պիրճախոս վկայություն մեր աղգային մեծ վեպը ստեղծող և այն սերնդից-սերունդ հաղորդող հասարակ մարդկանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի:

Հիմնականում զբաղվելով հայ ժողովրդական բանահյուսության, հատկապես հայկական էպոսի գրառման և ուսումնասիրման գործով, Կ. Մելիք-Օհանջանյանը աչքաթող չի արել նաև Սովետական Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հզդի քրդերի հարուստ ու գունեղ բանարվեստը: Տարբեր առիթներով նա բարձրացրել է այդ բանարվեստի ստեղծագործությունները, կորստից փրկելու, դրանք դրի առնելու և ուսումնասիրելու անհրաժեշտության հարցը: Մի շարք տարիներ ղեկավարելով Հայաստանի Կուլտուրայի պատմության և Պատմության ու դրականության ինստիտուտների ժողովրդական բանահյուսության բաժինների աշխատանքները, Կ. Մելիք-Օհանջանյանը իր կազմակերպած բանագիտական խմբարշավների մեջ ընդգրկել է նաև քուրդ և քրդերեն լեզվին լավ տիրապետող հայ բանահավաքների, օժանդակել է վերջիններիս

քրիական ժողովրդական բանահյուսության նյութեր գրի առնելու:

Առանձնապես հարկ է նշել այն դրական դերը, որ կատարել է գիտնականը, պրոֆ. Աս. Խաչատրյանի հետ միասին, Սովետական Հայաստանի քրդական բանագիտության ռահվիրա, ապագա վաստակաշատ քրդագետ Հ. Ջնդիրի տվյալ ասպարեզում առաջին քայլերը կատարելու գործում: 30-ական թվականների սկզբներին երիտասարդ քուրդ գիտնականին նա մասնակից է դարձրել իր գլխավորած խմբարշտավներին, գործուղել Հայաստանի քրդաբնակ մի շարք շրջանները (Ալազյազ, Թալին, Աշտարակ և այլն): Այդ և հետագա տարիների գիտարշտավների և անհատական գործուղումների շնորհիվ Հ. Ջնդին հայտնաբերում և գրի է առնում քրդական բանահյուսության արձակ ու չափածո բազմաթիվ ստեղծագործություններ, այդ թվում մի շարք նոր ու մեծարժեք պատումներ՝ «Մամե և Զինե», «Մամե և Այշե», «Սիաբանդ ու Խաջե», «Լայլե և Մաջրում», «Զամբիլֆրոշ», «Կառ ու Քուլուկ» նշանավոր վիպերգերից:

Ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց Կ. Մելիք-Օհանջանյանը տարիների ընթացքում զբաղվել է նաև հայագիտական կարեւոր բնագիւրների և հետազոտությունների ուսերեն թարգմանության և խմբագրման աշխատանքով, դրանով իսկ մեծապես նպաստելով հիշյալ բնագիւրների և հետազոտությունների գիտական ավելի լայն շրջաններ դուրս բերելու շնորհակալ գործին:

Այս առումով հատկապես հիշարժան է ակադեմիկոս Աբեղյանի «Հայոց հին դրականության պատմություն» հիմնարար և մեծարժեք աշխատության առաջին հատորի նրա կատարած ուսերեն թարգմանությունը (տպագրվել է

1948 թ. և վերահրատարակվել 1975-ին): Թարգմանչին հիմնականում հաջողվել է ռուսերենի փոխադրել ոչ միայն Արեղյանի մտածողության ու ռեժի յուրօրինակությունները, նրա ամրակուռ տրամաբանության ինքնատիպ ձևակերպումները, այլև գիտնականի աշխատության մեջ առատորեն օգտագործված բավական բարդ գրաբար արձակ ու չափածո մեջբերումները (Նզնիկ Կողբացու «Նդժ աղանդոց»-ից, Գր. Նարեկացու «Ողբերգության մատյան»-ից և այլն):

Հայագիտության բնագավառում Կ. Մելիք-Օհանջանյանի երկարամյա գիտական գործունեությունը չի սահմանափակվում միայն նրա վերը բնութագրված տպագիր աշխատություններով:

Հանգուցյալ գիտնականի անձնական արխիվում պահպանվել են ինչպես ավարտուն, այնպես էլ թերավարտ ինքնուրույն ու թարգմանական մի քանի կարևոր ձեռագիր աշխատություններ:

Այդ ձեռագրերից հարկ ենք համարում առաջին հերթին հիշատակել հեղինակի գիտական կենսագրության կարևոր նշանաձողերից մեկը հանդիսացող նրա՝ «Գրիգոր Լուսավորչի վեպը» խորագրով աշխատությունը, որը, ցավոք, մեզ չի հասել ամբողջությամբ: Կ. Մելիք-Օհանջանյանի վկայությամբ այն «հիմնականում արդեն պատրաստ է եղել» 20-ական թվականների կեսերին: Իր աշխատության գլխավոր թեղերին նա նույն տարիներին ծանոթացրել է ակադեմիկոս Ն. Մառին և ստացել մեծ գիտնականի «քաջալերող խոսքերն» ու «ուղեգիրը»¹: Նույն աշխատության վերաբերյալ

1 Տե՛ս «Մառը և հայագիտության հարցերը»: Նրևան, 1968, էջ 95-ի տողատակի ծանոթությունը,

տարբեր ժամանակ և զանազան լսարաններում արվել են բանավոր ու գրավոր մի շարք հաղորդում-զեկուցումներ, հրապարակվել նրա առանձին գլուխները կամ բաժինները:

Նշված նյութերը հիմք են տալիս հավաստելու, որ Կ. Մելիք-Օհանջանյանի «Գրիգոր Լուսավորչի վեպը» հետազոտությունը լինելու էր հայագիտության ուշագրավ ու ինքնատիպ գործերից մեկը, յուրօրինակ հայկական տարբերակը ուս հայտնի հեղափոխական, գրող ու գիտնական Ն. Մորոզովի (1854—1946 թթ.) «Քրիստոս» վերնագրով բազմահատոր աշխատության:

Պահպանված ձեռագիր հատվածներից և տպագրված մի-երկու գլուխներից երևում է, որ գիտնականի նպատակն է եղել՝ բացահայտել Գրիգոր Լուսավորչի մասին Հայաստանում ստեղծված ժողովրդական վեպի բնույթը, ընդգրկման շառավիղն ու կառուցվածքը, ցույց տալ, թե ինչպես Լուսավորչի առասպելավիպական կերպարի մեջ քրիստոնեական զգեստավորում են ստացել մեր հեռավոր նախնիների հավատալիքներն ու պատկերացումները բնության զարթոնքի վերաբերյալ:

Կ. Մելիք-Օհանջանյանի ձեռագրերից հիշարժան են նաև միջնադարյան մի քանի սկզբնաղբյուրների հիման վրա նրա պատրաստած հայկական միստերիանների համեմատական բնագիրը և այդ միստերիանների հետազոտության թեզերն ու ծրագրային նշումները: Ինչպես պարզվում է արխիվում եղած նյութերից, 40-ական թվականներին (1945, 1948) գիտնականը տվյալ թեմայով հաղորդում-զեկուցումներ է կարդացել Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: Երևանի թատերական ընկերությունում:

Կ. Մելիք-Օհանջանյանը առաջիններից մեկն է մեզա-

նում, որն ուշադրություն է դարձրել հայ թատրոնի պատմության այդ կարևոր էջին¹։ Գիտնականի կարծիքով միասերիաների նմուշները մեր իրականության մեջ գալիս են դեռևս 10—11-րդ դարերից։ Նրա համաստմամբ դրանք եղել են բեմականացման ենթարկված զանազան եկեղեցական ծեսեր ու խորհուրդներ, որոնք համապատասխան քաղաքական, հասարակական նպաստավոր պայմաններում հաճախ դուրս են եկել եկեղեցու պատերից, ներկայացվել նրա բակում, քաղաքային ու գյուղական հրապարակներում և այլուր։

Թեև ծավալով համեմատաբար փոքր, բայց ըստ էության ուշագրավ ու ավարտուն գործ է Կ. Մելիք-Օհանջանյանի գրչին պատկանող «Սասունի և Ապարանի ժողովրդական երգերի Սպ. Մելիքյանի գրառումները» խորագրով անտիպ ակնարկը²։ Վերջինիս մեջ նկարագրված, վերլուծված ու դնահատված է այն շնորհակալ աշխատանքը, որ տարիների ընթացքում կատարել է հայ անվանի երաժշտագետը Ապարանի, Թալինի, Աշտարակի ու այլ շրջաններում, հայտնաբերելով, ձայնագրելով, ուսումնասիրելով ու հրատարակության պատրաստելով հիշյալ շրջաններում ապրող արևմտահայ գաղթականների (սասունցի, մշեցի, մոկացի և այլն) և տեղաբնիկ եզդի քրդերի ժողովրդական երգերի բազմաթիվ մեծարժեք նմուշներ։

Անուրանալի է Կ. Մելիք-Օհանջանյանի մատուցած ծա-

1 Միասերիաների մասին առաջինը մեզանում գրել է վաստակաշատ արվեստարան և բանասեր Գ. Լևոնյանը (տե՛ս Գ. Լևոնյան. Թատրոնը հին Հայաստանում։ Երևան, 1941, էջ 92—111)։

2 Հոդվածը պահվում է Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանի Սպ. Մելիքյանի արխիվում։

ռայությունը բանագիտությանը, հայագիտությանը և արևելագիտությանը: Առանձնապես մեծ է նրա կատարած գործը «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի նոր պատումների գրաման, հրապարակման և ուսումնասիրության ասպարեղում

Իբրև բանագետ, հայագետ և արևելագետ Կ. Մելիք-Օհանջանյանը աչքի էր ընկնում լայն մտահորիզոնով, բազմակողմանի գիտելիքներով, պրպտող մտքով: Նա քաջատեղյակ էր ոչ միայն հարազատ ժողովրդի, այլև արևելյան ու արևմտյան մի շարք ազգերի մշակույթի պատմությանը, հասարակական գիտությունների ընդհանուր տեսական հարցերին: Հայ ժողովրդի պատմության, գրականության, բանավոր ստեղծագործության խնդիրները նա քննարկել ու լուծել է ուրիշ ժողովուրդների և, առաջին հերթին, արևելյան ազգերի պատմության, գրականության և բանավոր ստեղծագործության հետ ունեցած ընդհանրությունների, առնչությունների և առանձնատկությունների տեսանկյունից: Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատությունների բնորոշ հատկանիշը նրանց նորությունն ու ինքնատիպությունն է: Այդ աշխատություններում արժարժված են հիմնականում անմշակ թեմաներ, առաջադրված ու լուծված են չլուսաբանված հարցեր, հրապարակված են անտիպ նյութեր ու բնագրեր:

Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ՏՊԱԴԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1 9 3 4

Թուստամ-Ջալ: «Ֆիրդուսի: Բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու»-ում: Ե., Պետհրատ, 1934, էջ 159—230:

Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամեում» ու հայ-մասնենագրության մեջ:— «Ֆիրդուսի: Բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու»-ում: Ե., Պետհրատ, 1934, էջ 1—116: Ամփոփումը ողու. լիզվ., էջ 233—241:

«Շահնամե»-ի մոտիվները հայ ֆոլկլորի մեջ:— Խորհրդ. արվեստ, 1934, թ 10, էջ 4—7:

Ֆիրդուսի:— Գրական թերթ, 1934, 10 հոկտ., 20 հոկտ.:

1 9 3 6

Սասնա ծռեր: Հ. 1—2, Խմբ. Մ. Աբեղյանի: Աշխատակցությանը Կ. Մեյրի-Օհանջանյանի: Ե., Հայպետհրատ, 1936—1951:

Հ. 1. 1936. 78 էջ հայկ. էջագր., 1126 էջ, 18 թ. նկ.:

Հ. 2. Մ. 1. 1944. 21 էջ հայկ. էջագր., 404 էջ, 2 թ. դիմանկ.:

Հ. 2. Մ. 2. 1951. 1004 էջ, 8 թ. նկ.:

Ներածություն: (1. [«Սասնա ծռեր»] վիպի ծագումն ու կազմությունն ընդհանրապես: 2. Սանասարի և Բաղդասարի վիպը: 3. Դավթի վիպի սկզբնական ձևերը: 4. «Սասնա ծռերի» պատմականությունը: 5. «Սասնա ծռեր» ֆեոդալական վիպի անցումը գյուղացության: 6. Ժողովրդական կյանքը «Սասնա ծռերի» մեջ: 7. Վիպի արվեստը):—Ընդհանուր նախաբան:— Նախաբան առաջին հատորի: (Տեղագրություն Մոկսի, Շատախի, Սպարկերտի, Գավաշի և Հայոց ձորի):—Բարբառային քերականական գիտելիքներ Մոկսի, Շատախի, Սպարկերտի, Գավաշի և Հայոց ձորի պատմաների):—«Սասնա ծռեր» գրքում: Հ. 1. Ե., Պետհրատ, 1936, էջ 7—78: (Հայկ. էջագր.): Մ. Աբեղյանի հետ համատեղ:

լենինը ֆուկլորի մեջ:— «լենինը հայ ֆուկլորի մեջ» գրքում: Ե., Պետհրատ, 1936, էջ 7—57:

Խմբ. Լենինը հայ ֆուկլորի մեջ: Խմբ. և ներած. Կ. Մելիք-Օհանջանյանի: Աշխատասիրությամբ Գ. Թարվերդյանի և Ա. Ղանալանյանի: Ե., Հայպետհրատ, 1936. 176 էջ: (ՀՍԽՀ պատմ. և գրակ. ին-տ):

1 9 4 4

Սասնա ծռեր: Հ. 2. Մ. 1.

Տե՛ս 1936 թ.

Նախաբան երկրորդ հատորի: Բարբառային քերականական դիտելիքներ:—«Սասնա ծռեր» գրքում: Հ. 2. Մ. 1. Ե., Պետհրատ, 1944, էջ 5—21, (Հայկ. էջագր.):

1 9 4 5

Մովսես Խորենացու հայոց պատմության երկու պատառիկ: (Բանասիրական մանրունք):—Տեղեկագիր (ՀՍՍՀ ԳԱ), հաս. գիտ., 1945, № 5, էջ 65—72:

1 9 4 6

Ընտիր էջեր հայ գրականության: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Ե., Հայպետհրատ, 1946. 1159 էջ:

Կազմ. Մ. Հյուսյան, Կ. Մելիք-Օհանջանյան, Հր. Մուրադյան, Ն. Մուրադյան և Ս. Տարոնցի:

Միթրա-Միհրի արքայականներն ու գործակալները:—Գրական-բանասիրական հետախուզումներ (ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ. ին-տ), գիրք 1, 1946, էջ 269—327:

1 9 4 7

Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի:—Տեղեկագիր (ՀՍՍՀ ԳԱ), հաս. գիտ., 1947, № 6, էջ 59—74, № 7, էջ 59—77:

Սպիրիդոն Մելիքյան. Հայ ժողովրդական երգեր և պարեր: [Հ] 1,

[Տեքստը տպագր. է պատրաստել, թարգմ., ծանոթագր. և բառարանը կազմել է Կ. Մելիք-Օհանջանյանը]: Ե., Հայպետհրատ, 1949:

Կ. Մելիք-Օհանջանյանի անունը գրքում չի նշված:

1 9 5 1

Սասնա ծռեր։ Հ. 2։ Մ. 2։

Տե՛ս 1936 թ.։

Բառարան «Սասնա ծռեր» վեպի մեջ պատահող օտար ու բարբառային դժվար հասկանալի բառերի, դարձվածքների ու քերականական ձևերի—Մանոթագրություններ (Մ. Աբեղյանի հետ համատեղ)։—«Սասնա ծռեր» վեպի լուրաքանչյուր պատումի հերոսների էյուդագրությունը շարադրական եղանակով։— Հատուկ անունների ցանկ։— Առարկայական ցանկ։—«Սասնա ծռեր» գրքում։ Հ. 2։ Մ. 2։ Ե., Պետհրատ, 1951, էջ 705—1004։

1 9 5 7

—Առաջարան։—«Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» գրքում։ Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1957, էջ V—XXVII։

Խ մ բ. էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից։ Տեքստը պատրաստեցին և ծանոթագր. Մ. Ավդալբեկյան, Մ. Մկրտչյան և Ա. Սրապյան։ Ե., 1957. XXVII էջ հայկ. էջագր., 284 էջ։ (ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ. ին-տ)։

3ԵԱ.

1 9 6 1

Կիրակոս Դանձակեցի. Պատմություն հայոց։ (Տեքստը պատրաստեց և առաջարանը գրեց Կ. Ա. Մելիք-Օհանջանյան)։ Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961. 127 էջ հայկ. էջագր., 426 էջ։ (ՀՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր ձեռագրերի գիտա-հետազոտ. ին-տ «Մատենադարան»)։

1962

Շիրմաքար-հուշարձան Ալաշկերտցի Մանուկ Թորոյանի շիրմին։— Սովետ. Հայաստան, 1962, 18 նոյեմբ.։

Корюн և երբ «История Маштоца». [Предисл.]. — В кн.: Корюн
Житие Маштоца. Е., Айпетрат, 1962, с. 5—71.

Пер. Корюн. Житие Маштоца. Пер. Ш. В. Смбатяна и К. А.
Мелик-Оганджанияна. Е., Айпетрат, 1962, 164 с. (Науч.-исслед. ин-т
древних рукописей «Матенадаран» при Совете Министров АрмССР).

1 9 6 4

Ազաթանգեղոսի բանահյուսական աղբյուրների հարցի շուրջը:—Պատ-
մա-բանասիր. հանդես (ՀՍՍՀ ԳԱ), 1964, № 4, էջ 53—82.

«Վարք Մաշտոցի» ժանրը և պատմագրական նշանակությունը:—Բան-
բեր մատենադարանի, 1964, № 7, էջ 49—59,
84.

1 9 6 5

Արմին Թէոֆիլ Վեգներ: (Մեծ եղեռնի անկաշառ վկա):—Զարթոնք
(Բեյրութ), 1965, 1 օգոստ., 3 օգոստ.,

Նույնը.—Արև (Կահիրե), 1965, 5 սեպտ., 7 սեպտ.,

Բազմավաստակ գիտնականը: [Մանուկ Աբեղյանի ծննդյան 100-ամյա-
կի առթիվ]—Սովետ. Հայաստան, 1965, 23 մայիսի.

Բերթեկներ իմ հուշամատյանից: [Եղեռնի 50-ամյակի առթիվ]:—էջ-
միածին, 1965, № 1—3, էջ 36—39.

Հաղթ կաղնին: (Մանուկ Աբեղյանի ծննդյան 100-ամյակի առթիվ):
—Սովետ. Հայաստան, 1965, 23 մայիսի.

Հայաստանի սիրով: [Լեհ թարգմանիչ Իգոր Սիկիրցկու մասին]:—
Գրական թերթ, 1965, 12 նոյեմբ.

Հայրենասիր բանագետը: [Գրեգոր Սրվանձտյանցի ծննդյան 125-
ամյակի առթիվ]:—Սովետ. Հայաստան, 1965, 28 դեկտ.

Մանուկ Աբեղյան: (Մննդյան 100-ամյակի առթիվ):—Պատմա-բանա-
սիր. հանդես (ՀՍՍՀ ԳԱ), 1965, № 3, էջ 3—18.

Гарегин Срвандзтянц. [К 125-летию со дня рождения].—Ком-
мунист, 1965, 28 дек.

Արմին Բ. Վեգներ: (Մենդլան 80-ամյակի առթիվ):—Հայրենիքի ձայն, 1966, 30 հոկտ., էջ 5:

Պատմության փարէզի և Վեննայի: (Միշնադարյան ասպետական սիրավեպ): Պատմության Վեննտիկ քաղաքին: (Զափածո): Աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի: Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966. 305 էջ: (ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ին-տ «Մատենադարան»):

«Քար Թորոսի» հրատարակչությամբ բարձրացած աղմուկի առթիվ: [Արտասահմանում]:— Գրական թերթ, 1967, 22 դեկտ.:

Ազաթանգեղոսի պատմությունն ու նրա ժողովրդական բանավոր սկզբնաղբյուրները:— «Մառը և հայագիտության հարցերը» գրքում: Ե., 1968, էջ 95—118:

Բանահավաքը, ազգագրագետը, բանագետը: (Սահակ Մովսիսյանի (Բենսեի) ծննդյան 100-ամյակի առթիվ):— Սովետ. Հայաստան, 1968, 3 ապր.:

Մխիթար Հերցին և Բեռլինի համալսարանի պրոֆեսոր, դոկտոր Թոմաս Բոասը: (Մի թերթիկ իմ հուշատետրից):— Առողջապահություն, 1968, № 3, էջ 6—7:

«Պատմա-բանասիրական հանգին»-ի 10 տարին:—Լրաբեր հաս. գիտ. (ՀՍՍՀ ԳԱ), 1968, № 4, էջ 90—92:

Десятилетие «Историко-филологического журнала».—Коммунист, 1968, 9 фев.

Историко-литературная концепция З. Бунятова.— Вестник архивов Армении, 1968, № 2, с. 169—190.

Ականավոր կոմունիստ Արշավիր Մելիքյանի մասին (1912—1920 թթ.)։—Լրաբեր հաս. գիտ. (ՀՍՍՀ ԳԱ), 1969, № 3, էջ 82—87.

Հաղարամյակների իմաստության գանձարանը նոր հրատարակությամբ։ [«Պատմություն և խրատք իրկարայ իմաստնության գրքի հրատարակության առթիվ»։—Երիտ. Հայաստան (Նյու-Յորք), 1969, 21 նոյեմբ.]

Հանճարեղ ստեղծագործողը։ [Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ]։— Երեկոյան Երևան, 1969, 20 նոյեմբ.։

Еще раз о национальной принадлежности Мхитара Гоша, автора «Судебника». — Вестник архивов Армении, 1969, № 11, с. 183—198.

О статье Т. С. Золяна. [«Новые материалы к биографии А. В. Суворова»]. — Вестник архивов Армении, 1969, № 3, с. 219.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Կ. Ա. ՄԵԼԻՔ-ՕԶԱՆՋԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ
ԵՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդարյան Գ. Անխոնջ գիտնականը: [Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ]:—Սովետ. Հայաստան, 1963, 22 մարտի:

Նույնը՝—Արև (Կահիրե), 1963, 8 օգոստոս:

Նույնը՝—Լրարեր (Նյու-Յորք), 1963, 18 հունիսի:

Արդարյան Գ. Բաղմահմուտ հայագետը: (Կարապետ Մելիք-Օհանջանյանի ծննդյան 80-ամյակը):—Գրական թերթ, 1973, 2 մարտի:

Արդարյան Գ. Կարապետ Մելիք-Օհանջանյան: [Մահախոսական]:—Լրարեր հաս. գիտ. (ՀՍՍՀ ԳԱ), 1970, № 3, էջ 108—109:

Արդարյան Գ. «Սասնա ծռեր»-ի գլխավոր հավաքականում: (Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 75-ամյակի առթիվ):—Հայրենիքի ձայն, 1968, 20 մարտի:

Ականավոր հայագետի հիշատակին: [Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 80-ամյակին նվիրված հուշ-երեկո Մատենադարանում]:—Սովետ. Հայաստան, 1973, 14 մարտի:

Նույնը՝—Երեկոյան Երևան, 1973, 14 մարտի:

Նույնը՝—Գրական թերթ, 1973, 16 մարտի:

Ավդալբեգյան Մ. «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» ժողովածուի առաջարանի մասին:—Ավդալբեգյան Մ. «Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը» գրքում: Ե., 1971, էջ 24—28:

Արամյան Ռ. Զրույց Կարապետ Մելիք-Օհանջանյանի հետ:—Գրական թերթ, 1968, 26 ապր.:

Արմին Ք. Վեգների նամակը: [Կ. Մելիք-Օհանջանյանի մահվան առթիվ]:—Հայրենիքի ձայն, 1970, 20 մայիսի, էջ 6:

Բաղդասարյան է. Ականավոր հայագետը: (Հուշ-երեկո՝ նվիրված ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 80-ամյակին):—Պատմա-բանասիր. հանդես (ՀՍՍՀ ԳԱ), 1973, № 1, էջ 299—300:

Գալստյան Ա. Մեծ ու շնորհակալ աշխատանք: Կիրակոս Գանձակեցի: Պատմութիւն հայոց: Աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1962:—Սովետ. դպրոց, 1962, 30 նոյեմբ.: [Գրախոսություն]:

Գրիգորյան Գ. Կարապետ Մելիք-Օհանջանյան:—Հանդես ամսօրյա, 1970, № 4—6, սյունակ 243—250:

Դարբերի գանձը՝ դարբերին... [Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ]:—Երևան, 1963, 14 մարտի:

Դոկուխանյան Ա. Բաղմերախո բանասերի աշխատասիրությամբ: Մելիք-Օհանջանյան Կ. Պատմություն Փարէզի և Վեննայի: Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966:—Սովետ. Հայաստան, 1966, 6 հունիսի: [Գրախոսություն]:

Թիրեաքյան Մ. Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն հայոց: Աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի: Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1961:—Լրաբեր (Նյու-Յորք), 1964, 26 նոյեմբ.: [Գրախոսություն]:

Կարապետ Մելիք-Օհանջանյան: [Ծննդյան 70-ամյակի առթիվ]:—Սովետ. գրակ., 1963, № 3, էջ 146:

Կարապետ Մելիք-Օհանջանյան: (Ծննդյան 80-ամյակի առթիվ):—Հայրենիքի ձայն, 1973, 28 փետր.:

Կարապետ Մելիք-Օհանջանյան: [Մահախոսական]:—Սովետ. Հայաստան, 1970, 26 փետր.: Ստորագր. Ա. Ե. Փոլինյան, Բ. Հ. Մուրադյան, Ն. Խ. Հարությունյան և ուրիշ.:

Նույնը՝—Հայրենիքի ձայն, 1970, 4 մարտի, էջ 6:

Հարությունյան Ս. Կարապետ Մելիք-Օհանջանյան. (1893—1970).—Երևանի համալսարան, 1971, № 10, էջ 56—61:

Арутюнян С. Карапет Мелик-Оганджаниян (1893—1970).

Հարությունյան Ս. Հայագիտության ազնիվ երախտավորը:—Սովետ. Հայաստան, 1965, № 7, էջ 19—20:

Հարությունյան Ս. Պատմության ֓արէզի և Վեննայի Պատմության Վենետիկ քաղաքին: Աշխատասիրության ֓. Մելիք-Օհանջանյանի Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966:—Գրական թերթ, 1967, 24 մարտի [Գրախոսություն]:

Հարությունյան Ս. Абегиан М. История древнеармянской литературы. Пер. с арм. К. А. Мелик-Оганджаниян и М. О. Дарбинян. Е., 1975.—Պատմա-բանասիր. հանդես (ՀՍՍՀ ԳԱ), 1976, № 2, էջ 233—236: [Գրախոսություն].

Հորելյան Եր.: [Կարապետ Աղաբեկի Մելիք-Օհանջանյանի ծննդյան 75-ամյակի առթիվ]:—Պատմա-բանասիր. հանդես (ՀՍՍՀ ԳԱ), 1968, № 2, էջ 256—257:

Ղանալանյան Ա. Ականավոր արեւելագետը, բանագետն ու հայագետը (Կարապետ Մելիք-Օհանջանյանի ծննդյան 80-ամյակի առթիվ):—Սովետ. Հայաստան, 1973, 22 փետր.:

Ղանալանյան Ա. Հայ էպոսագիտության մեծ երախտավորը [Կ. Մելիք-Օհանջանյան]:—Գրական թերթ, 1970, 27 մարտի:

Ղանալանյան Ա. Տ. Վաստակավոր հայագետը (Պրոփ. Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ):—Պատմա-բանասիր. հանդես (ՀՍՍՀ ԳԱ), 1963, № 2, էջ 57—70:

Ղանալանյան Ա. Վաստակավոր հայագետը (Պրոփ. Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 70 և գիտական գործունեության 50-ամյակի առթիվ):—Գրական թերթ, 1963, 13 մարտի:

Ղ ո Ր Ղ ա ն յ ա ն Կ. Կիրակոս Գանձակեցի և նրա գործը: Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց: Աշխատաւիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1961:—Սովետ. Հայաստան, 1962, № 6, էջ 34—35: [Գրախոսութիւն]:

Մ ա լ խ ա ս յ ա ն Ս տ. Մի բացատրութիւն: [Կ. Մելիք-Օհանջանյանի «Սովետսկոյ Խորհնացու Հայոց պատմության երկու պատառիկ» հոգովածի առթիւ]:—Սովետ. գրակ., 1946, № 4, էջ 3—7:

Մ ա Ր տ ի Ր ո ս յ ա ն Ա. Մեր ուսուցիչը: [Կ. Մելիք-Օհանջանյան]:—Սովետ. Հայաստան, 1961, 14 նոյեմբ.:

Մ ե լ ի ք -Օ հ ա ն ջ ա ն յ ա ն Կ. Ա.— «Մեր անվանի դասախոսները» գրքում: Մաս 1: Ե., 1970, էջ 175:

Մ ե ծ ա Ր մ ա ն Ե Ր Կ Լ Ո: [Մատենադարանում՝ նվիրված Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 70 և գիտական գործունեության 50-ամյակին]:— Պատմա-բանասիր. հանդես (ՀՍՍՀ ԳԱ), 1963, № 1, էջ 300:

Ն ա Ղ ի ն յ ա ն Ա. Երախտաշատ գիտնականը: (Ակադեմիկոս Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 75-ամյակի առթիւ):—Սովետ. Հայաստան, 1968, 27 ապր.:

Ս ե ա կ Պ. Արվեստագետ գիտնականը: [Կ. Մելիք-Օհանջանյանի ծննդյան 70-ամյակի առթիւ]:—Սովետ. արվեստ, 1963, № 5, էջ 58:

Выдающийся арменовед. [К 70-летию со дня рождения К. А. Мелик-Оганджяна].— Коммунист, 1963, 16 марта.

К. А. Мелик-Оганджян. [Некролог].— Коммунист, 1970, 26 февр.

Киракосян Л. Неутомимый искатель. [К. А. Мелик-Оганджян].— Коммунист, 1965, 8 июля.

АЛФАВИТНЫЙ УКАЗАТЕЛЬ ТРУДОВ

Հրատ. թիվ

Աղավանդեղոսի բանահյուսական աղբյուրների հարցի շուրջը	1964
Աղավանդեղոսի պատմությունն ու նրա ժողովրդական բանավոր սկզբնաղբյուրները	1968
Ականավոր կոմունիստ Արշավիր Մելիքյանի մասին	1969
Առաջաբան (Եղեկ հայ միջնադարյան գեղարվեստական արձակից՝ զբոսւմ)	1957
Արմին Թ. Վեգներ	1966
Արմին Թեոֆիլ Վեգներ	1965
Բաղմավաստակ դիտնականը [Մ. Աբեղյան]	1965
Բանահավաքը, ազգագրագետը, բանագետը (Սահակ Մովսիսյան (Բենսե)...)	1968
Ընտիր Եղեկ հայ գրականության	1946
Թերթիկներ իմ հուշամատյանից [Եղեկ 50-ամյակի առթիվ]	1965
Լենինը ֆուլլորի մեջ	1936
Խ մ բ ա գ ռ ու մ	
Եղեկ հայ միջնադարյան գեղարվեստական արձակից	1957
Լենինը հայ ֆուլլորի մեջ	1936
Կիրակոս Գանձակեցի. Պատմություն հայոց	1961
Հաղարամյակների իմաստության գանձարանը նոր հրատարակությամբ («Պատմություն և խրատք Խիկարայ իմաստնոյ» գրքի մասին)	1969
Հաղթ կաղնին [Մանուկ Աբեղյանի ծննդյան 100-ամյակի առթիվ]...	1965
Հայաստանի սիրով [Ի. Սիկիրիցկու մասին]	1964
Հայրենասեր բանագետը [Գ. Սրվանձտյանց]	1965
Հանճարեղ ստեղծագործողը [Կոմիտաս]	1969

Մանուկ Աբեղյան	1965
Միթրա-Միհրի արքայականներն ու գործակալները	1940
Մխիթար Հերացին և Բեռլինի պրոֆեսոր, դոկտոր Թոմաս Բոսսը	1968
Մովսես Խորենացու հայոց պատմության երկու պատճառիկ	1945
«Շահնամ»-ի մոտիվները հայ ֆոլկլորի մեջ	1934
Շիրմաքար-հուշարձան Ալաշկերտցի Մանուկ Թորոյանի շիրմին.	1962
«Պատմա-րանասիրական հանդեսի» 10 տարին	1968
Պատմութիւն Փարէզի եւ Վեննայի	1966
Ռոստամ-Ջալ	1934
Սասնա ծռեր	1936, 1944, 1951
Սպիրիդոն Մելիքյան. Հայ ժողովրդական երգեր և պարեր [Հ.] 1	1949
«Վարք Մաշտոցի» ժանրը և պատմագրական նշանակությունը	1964
Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի	1947
«Փար Թորոսի» հրատարակությանը բարձրացած աղմուկի առթիվ	1967
Ֆիրդուսի	1934
Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-նամ»-ում ու հայ մատենագրության մեջ	1934
Гарегин Срвандзтянц	1965
Десятилетие «Историко-филологического журнала»	1968
Еще раз о национальной принадлежности Мхитара Гоша, автора «Судебника»	1969
Историко-литературная концепция З. Буннятова	1968
Корюн и его «История Маштоца»	1962
О статье Т. С. Золяна [«Новые материалы к биографии А. В. Суворова»]	1969
Перевод	
Корюн. Житие Маштоца	1962

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն

Կաղամողի կողմից	5
Ակադեմիկոս Կարապետ Աղաբեկի Մելիք-Օհանջանյանի կյանքի և գործունեության հիմնական տարեթվերը	6
Կյանքի և գիտա-մանկավարժական գործունեության համառոտ ակ- նարկ	8
Տպագիր աշխատությունների մատենագիտություն	39
Գրականություն Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի կյանքի և աշխատու- թյունների մասին	45
Աշխատությունների այբբենական ցանկ	49

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Ֆունդամենտալ գրադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ԶԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչներ
Ջ. Գ. ՆԱԹԱՆՅԱՆ, Ս. Գ. ՊԻՐՈՆՎԱ

ՎՖ 00048 Պատվեր 1171 Հրատ. 4618 Տպաքանակ 500
Հանձնված է շարվածքի 24.09. 1977 թ.: Ստորագրված է տպագրության
20.07. 1978 թ.: Տպագր. 3,25. մամուլ, պայման. 2,27 մամուլ, հրատ.
1,75 մամուլ: Թուղթ № 1, 70×108¹/₃₂: Գինը 30 կոպ.:
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР. 375019, Ереван,
Барикамютян 24-г
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության 24:
Ереванская типография Издательства АН Армянской ССР,
Ереван, Барикамютян 24



ԳԻՆԸ 80 Կ.